Հայոց լեզվի և (հայ) գրականության ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Դերբայական դարձված. կետադրությունը»

Կատարող՝ Խաչատրյան Անահիտ Ժորայի

Դպրոց՝ Երևանի հ. 120 հիմնական

Առարկա՝ «Հայոց լեզու»

Կազմակերպություն՝ «Երևանի Լեոյի անվան հ. 65 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2023

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը

- Հետազոտական աշխատանքը ներկայացվում է տպագիր։
- Աշխատանքը շարադրվում է տպագիր։
- Ծավալը կարող է լինել 15- 20 էջ, տառատեսակը՝ Unicode, տառաչափը՝ 12 pt, տողերի միջակայքը՝ 1,5։
- Էջի ֆորմատը՝ A4 (210x297մմ),
- Էջադրել՝ լուսանցքները. ձախից՝ 3սմ, վերևից և ներքևից՝ 2սմ, աջից՝ 1,5մմ:
- Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից։
- Պարբերությունները սկսել 1մ խորքից՝ TAB-ի կիրառմամբ:
- Էջերը համարակալել ներքևի աջ անկյունում՝ 1 տեսքով։

Բովանդակություն

Ներածություն....4
Գլուխ 1....5
1.1 Բայ....5
1.2 Անկախ դերբայներ....7
1.3 Չտրոհվող դերբայական դարձվածներ....9
1.4 Պարագաներ....12
1.5 Տրոհվող դերբայական դարձված....Error! Bookmark not defined.
1.6 Պարագաներ՝ արտահայտված դերբայական դարձվածով, որոնք տրոհվում են....16
1.7 Կապով արտահայտված դ/դ – ներ....17
Եզրակացություն....19
Գրականության ցանկ....20

Ներածություն

2024 թվականին կլրանա քառասուն տարին, որ աշխատում եմ դպրոցում: Չգիտեմ, թե ինչու, բայց «Բայ» թեման ինձ միշտ հետաքրքրել է ավելի շատ և մանավանդ «Դերբայական դարձվածը»՝ իր կառուցվածքով, կետադրությամբ և բարդությամբ:

Շատ հետաքրքրված լինով՝ կարդացել և «նայել» եմ դերբայական դարձվածը ներկայացնող ուսումնասիրությունները՝ գրված տարբեր լեզվաբանների կոմից, ապա իմ գիտելիքներով ու փորձով որոշել եմ ներկայացնել այդ թեման և հետազոտական աշխատանքի միջոցով անբողջացնել այն ամենը, ինչ ձեռք եմ բերել այդ տարիների՝ իմդասավանդման փորձով:

Տարիներ շարունակ, երբ 9-րդ դասարան եմ ունեցել, և եկել է «Դերբայական դարձված» թեման բացատրելու ժամանակը, մտածել եմ՝ ինչպես սկսել և ինչպես ավարտել բացատրությունը, որ հեշտ լինի և հասկանալի՝ աշակերտների համար:

1.1 Բայ

Թեման սկսում եմ կրկնողությունից. այն է՝ հիշեցնում եմ բայ թեման:

1) Աշակերտների միջոցով հիշեցնում եմ, թե որն է բայը. առարկայի գործողություն և եղելություն ցույց տվող բառերը կոչվում են բայ:

Բայը պատասխանում է ի՞նչ անել, ի՞նչ է անում, ի՞նչ արեց, ի՞նչ կանի, ի՞նչ եղող, ի՞նչ եղած և նման հարցերի:

Բայերը լինում են դիմավոր և անդեմ:

1) Դիմավոր

գրում եմ – I դ. եզ. թ. ն. ժամ. սահմ. եղ.

գրեցիր – II դ. եզ. թ. անց. ժամ. սահմ. եղ.

խոսեն – III դ. հոգն. թ. ապ. ժ. ըղձ. եղ.

Սրանք ունեն դեմք, թիվ, ժամ., եղանակ

(Անդեմ բայերը կոչվում են դերբայներ)

		ե(խոն.)		ա(խոն.)
1.	Անորոշ	գրել		խաղալ
2.	Ենթակայական	գրող		խաղացող
3.	Հարակատար.	գրած		խաղացած
4.	Համակատար	գրելիս		խաղալիս
5.	Անկատար	գրում	եմ	խաղում
6.	Վաղակատար	գրել	եմ	խաղացել
7.	Ապակատար	գրելու	եմ	խաղալու
8.	Ժխտական	գրի	չեմ	խաղա

Սրանք ունեն ժամանակ և եղանակ

Հիշեցնում եմ, որ անորոշ, ենթակայական, հարակատար և համակատար դերբայները (իհարկե, հարակատարը՝ որոշակի վերապահությամբ, այսինքն՝ միայն վիճակ արտահայտող բայերը կարող են միանալ օժանդակ բային. օր.՝ կանգնած, նստած, պառկած, քնած, հոգնած (եմ, էիք, էին) և այլն) օժանդակ բային չեն միանում, դիմավոր ձևեր չեն կազմում, այսինքն՝ նրանք նախադասությունների մեջ չեն կարող հանդես գալ որպես պարզ ստորոգյալներ:

Մնացած չորսը՝ անկատար, վաղակատար, ապակատար և ժխտական դերբայները, միանում են օժանդակ բայի ներկա և անցյալ ձևերին, դիմվոր ձևեր կազմում՝ նախադասությունների մեջ դառնալով պարզ ստորոգյալներ:

Այսինքն՝ սրանք համարվում են կախյալ դերբայներ, կամ ձևաբայեր, քանի որ առանց օժ. բայի չեն գործածվում:

1.2 Անկախ դերբայներ

Կրկին վերադառնում եմ առաջին չորս դերբայներին, նրանց անվանում եմ անկախ դերբայներ՝ բացատրելով, որ անկախ են համարվում, քանի որ կախվածություն չունեն օժանդակ բայից, այսինքն՝ նրանք գործածվում են գոյականաբար, հոլովվում են, հոդ ստանում և նախադասությունների մեջ հանդես են գալիս որևէ կամ տարբեր պաշտոններով, բացի համակատար դերբայից: Վերջինս, ի տարբերություն նախորդների, չի հոլովվում, հոդ չի ստանում և նախադասությունների մեջ հանդես է գալիս որպես ժամանակի պարագա: Իհարկե, սրանցից ոչ մեկը չի կարող հանդես գալ որպես պարզ ստորոգյալ:

1) Անորոշ դերբայ	2) Ենթակայական դերբայ	3) Հարակատար դերբայ
ու. գրել(ը)	ու. գրող(ը)	ու. գրած(ը)
ս. գրելու	ս. գրողի	ս. գրածի
տ. գրելու(ն)	տ. գրողի(ն)	տ. գրածին
հ. գրել(ը)	հ. գրող(ը) , գրողի(ն)	հ. գրածը
բ. գրելուց	բ. գրողից	բ. գրածից
գ. գրելով	գ. գրողով	գ. գրածով
ն. ____	ն. ___	ն. ___

4) Համակատար դերբայ (չի հոլովվում) – գրելիս, խաղալիս

Առանձնացնելով առաջին չորս դերբայները (առաջին երեքը՝ հոլովված ձևերով)՝ դրանց ավելացնում եմ լրացում կամ լրացումներ և դուրս եմ բերում դերբայական դարձվածի կանոնով:

Նախադասության մեջ գործածված դերբայն իր լրացումով կամ լրացումներով կոչվում է դերբայական դարձված:

Օրինակներ՝ տարբեր դերբայներով կազմված դերբայական դարձվածներ:

ա) Վերցնելով դռան առջև դրված քարը՝ նետեց ջուրը:

բ) Ամենից շատ ինձ դուր եկավ վերջին երգողի ձայնը:

Դերբայական դարձվածի գերադաս անդամը դերբայն է՝ անորոշ, ենթակայական, հարակատար դերբայները՝ որևէ հոլովաձևով, և համակատար դերբայը:

1) Անորոշ դերբայ – կռունկների վերադառնալը

2) Ենթակայական դերբայ – տնամերձ այգին ջրողի

3) Հարակատար դերբայ – հուշարձանի առջև խոնարհված

4) Համակատար դերբայ – պատը շարելիս

Դերբայական դարձվածը բայական անդամով բառային կապակցություն է. այն հանդես է գալիս որպես նախադասության մեկ անդամ, իհարկե, ծավալուն կառուցվածքով `

(մեկ բառից ավելի է) :

Նախադասության մեջ դերբայական դարձվածը կարող է կատարել ենթակայի, ստորոգելիի (բայց ոչ հանգույցի), գոյականական և բայական անդամների լրացումների պաշտոնները, այսինքն՝ բոլոր պաշտոնները, բացի պարզ ստորոգյալից:

Դերբայական դարձվածը նախադասության մեջ կարող է հանդես գալ որպես տրոհվող և չտրոհվող անդամ:

1.3 Չտրոհվող դերբայական դարձվածներ

1) Ենթակա դերբայական դարձված

օր.՝ Նրան ճանաչողները բոլորովին չէին զարմացել նրա այդ արարքից:

Հորից նրան ժառանգություն մնացածը մի փոքրիկ տուն էր ու այս պարտեզը:

2) Ստորոգելի դերբայական դարձված

օր.՝ Խեղճացած այս պարոնը մի՞թե երեկ հարթակից հոխորտացողը չէ:

Դեպի լույսի աղբյուրն ընթացողների ոգին ու երազանքն անհնար է սպանել:

3.1) Գոյականով արտահայտված ամդամի լրացումներ

ա) Որոշիչ դերբայական դարձված (նախադաս)

օր.՝ Ինքը դեռ նահապետականությունը չկորցրած հայ ընտանիքում էր ապրում:

Նրանք ունեին մինչև ականջները հասնող փարթամ ընչացքներ:

բ) Որոշիչ դերբայական դարձված (հետադաս ծավալուն)

Ուսումնասիրության ընթացքում պարզել եմ, որ հետադաս ծավալուն որոշիչը կետադրվում է ոչ նրա համար, որ արտահայտված է դերբայական դարձվածով, այլ այն պատճառով, որ այն հետադաս ծավալուն որոշիչ է, և կետադրվում է հետադաս ծավալուն որոշչի կետադրմամբ: Եվ պարտադիր չէ, որ դերբայական դարձվածով արտահայտված լինի որոշիչը, որպեսզի կետադրվի. այն կարող է արտահայտված լինել նաև անվանական կապակցությամբ: (հղում՝ Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան «Շարահյուսություն», էջ 88)

օր.՝ ա) Կրակը՝ քամուց թեթևակի բորբոքված, շուտով նորից հանգավ:

բ) Կինը՝ երկնագույն աչքերով, ներս մտավ ու մոտեցավ պահարանին:

3.2) Հատկացուցիչ դերբայական դարձված

Հատկացուցիչը դերբայական դարձվածով արտահայտվելու դեպքում ևս կետադրություն չունի:

օր.՝ Դեպի լույսի աղբյուրն ընթացողների ոգին ու երազանքն անհնար է սպանել:

Դաժան թագավորի տիրույթներից փախչողների սրտերում ահագնանում է բռնվելու վախը:

Հատկացուցիչը կարող է կետադրվել այն դեպքում, երբ արտահայտված է թե' բայական և թե' անվանական կապակցությամբ, և լրացում – լրացյալ (հատկացուցիչ – հատկացյալ) հարաբերության մեջ կա իմաստային շփոթում:

օր.՝1) Ես ապրելու ուժ էի ստանում դահլիճներում ու հրապարակներում հավաքվածների՝ հայ երգ ու խոսքով ոգեշնչված բազմություններից:

2) Նա ուշադրությամբ նայում էր գեղեցիկ աղջկա՝ արևի լույսով ողողված աչքերին:

Երկու նախադասություններում էլ հատկացուցիչը բութ (՝) է կրում ոչ նրա համար, որ ունենք դերբայական դարձվածով արտահայտված հատկացուցիչ: Չէ՞ որ երկրորդ նախադասության մեջ հատկացուցիչը արտահայտված է անվանական կապակցությամբ, և կետադրական նշանը՝ բութ (՝), կանխում է իմաստային շփոթումը, այսինքն՝ կետադրությունը դերբայական դարձվածին չի վերաբերում: (հղում՝ Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան «Շարահյուսություն», էջ 88)

4) Բացահայտիչ դերբայական դարձված

Բացահայտիչը բացահայտյալից անջատվում է բութով, իսկ մնացած անդամներից՝ ստորակետով (իհարկե, ստորակետը որոշ դեպքերում չի դրվում՝ հաջորդող օժ. բայ, էլ բառը, կապով արտահայտված բացահայտիչ, լրացում – լրացյալ կապակցություն և այլն: Այս դեպքում ևս կետադրությունը նշանակելիս նշանակություն չի տրվում նրան, թե բացահայտիչը բայական կամ անվանական կապակցություն է:

Օր.՝ Մեր հերոսները՝ հայրենիքի համար մարտիրոսվածները, հավերժ կմնան մեր սրտերում:

Հարսանեկան արարողության մասնակիցների՝ ուրախ երգող – պարողների ձայները լսելի են ողջ գյուղում:

Մեծանուն հայը՝ ծովանկարիչ Այվազովսկին, ապրել է Թեոդոսիայում: (հղում Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան «Շարահյուսություն», էջ 88)

Այսպիսով, իմ կարծիքով, գոյականական անդամի լրացումները կետադրվում են ոչ թե դերբայական դարձվածի կետադրությամբ, այլ իրենց՝ որոշչի, հատկացուցչի և բացահայտչի կետադրությամբ:

4.1 Բայական անդամի լրացումներ

Խնդիրներ `արտահայտված դերբայական դարձվածով

1) Ուղիղ խնդիր դերբայական դարձված

օր.՝ Նստած օդաչուական խցիկում՝ վայելում էի այն օրերին ակնկալածս:

2) Հանգման անուղղակի խնդիր դերբայական դարձված

օր.՝ Այժմ փորձեցի հեռվից նայել քարափը բարձրացողին:

3) Ներգործող անուղղակի խնդիր դերբայական դարձված

օր.՝ Եկեղեցին վերջապես նորոգվեց լավագույն կառուցողների կողմից;

4) Անջատման անուղղակի խնդիր դերբայական դարձված

օր.՝ Մենք նոր լուրեր ստացանք Արցախից վերադարձողներից:

5) Միջոցի անուղղակի խնդիր դերբայական դարձված

օր.՝ Ուսուցիչը միշտ հպարտանում է իր լավ սովորողներով:

6) Վերաբերության անուղղակի խնդիր դերբայական դարձված

օր.՝ Ուսուցիչը հետքրքրությամբ պատմում էր այդ ստեղծագործությունը գրողից (կամ՝ գրողի մասին):

7) Միասնության անուղղակի խնդիր դերբայական դարձված

օր.՝ Մենք որոշեցինք էքսկուրսիա գնալ այդ հեռավոր վայրը ճանաչողների հետ:

Այսպիսով, խնդիր դերբայական դարձվածները նույնպես չեն կետադրվում. նաև այն դեպքում, եթե դերբայական դարձվածը արտահայտված է կապային կառույցով:

1.4 Պարագաներ

Պարագաներ՝ արտահայտված դերբայական դարձվածով, որոնք չեն տրոհվում:

1) Համակատար դերբայով արտահայտված դերբայական դարձվածը չի կետադրվում (ժամանակի պարագա դերբայական դարձված):

օր.՝ Այդ բոլորը հիշելիս Եփրեմ պապը ամեն անգամ զգում էր հնձած խոտի հոտը:

Համակատար դերբայով արտահայտված դերբայական դարձվածը կկետադրվի, եթե այն հանդես է գալիս որպես պարագայական կամ ճշգրտող մասնական բացահայտիչ. իհարկե, կրկին այս կետադրությունը ոչ թե դերբայական դարձվածին, այլ մասնավորող բացահայտչին է վերաբերում:

օր.՝ Երեկ՝ դպրոց գնալիս, հանդիպեցի իմ նախկին աշակերտուհուն:

2) Նույնը վերաբերում է տեղի պարագային. դերբայական դարձվածը արտահայտվում է կապային կառույցով և չի կետադրվում ոչ մի դիրքում. կկետադրվի, եթե այն պարագայական, մասնավորող բացահայտիչ է.

օր.՝ ա) Զորքերը հանդիպեցին Արաքսի և Ախուրյանի միախառնվելու տեղում:

բ) Առվի վերին հատվածում՝ ջուրը բացվելու տեղում, քարեր էին կուտակվել:

3) Կապային կառույցով արտահայտված ժամանակի պարագա (չի կետադրվում)

օր.՝ ա) Մինչև վարազների՝ ջրի գալը Ավին նստում էր քարին և սպասում էր:

բ) Այս ամենը տեսնելուց հետո չէի կարող հարգանքով չլցվել մանկավարժների հանդեպ:

4) Հիմունքի պարագա դերբայական դարձված

օր.՝ Աչքերը ներքև խոնարհելուց հասկացա, որ մի բան թաքցնում է:

1.5 Տրոհվող դերբայական դարձված

Իմ աշխատանքի ընթացքում երկար ժամանակ ուսումնասիրել եմ դերբայական դարձվածի կետադրությունը ավելի հեշտությամբ ընկալելի դարձնելու հնարավորությունները՝ իհարկե, նախապես ճշտելով նախադասության մեջ դերբայական դարձվածի սահմանը՝ ([ ]), և դիրքը, որոնք երեքն են՝ նախադաս (առաջադաս), միջադաս և վերջադաս:

Դերբայական դարձվածի դիրքը հնարավոր է որոշել ենթակայի և ստորոգյալի դիրքերի միջոցով: Եվ կազմել եմ բանաձևային երեք դիրք՝

1) Նախադաս (առաջադաս) - դ/դ՝ ենթակա + ստորոգյալ

2) Միջադաս – ա) ենթակա, դ/դ, ստորոգյալ

բ) տեղի պարագա, դ/դ, ենթակա + ստորոգյալ

գ) ժամանակի պարագա, դ/դ, ենթակա + ստորոգյալ

3) Վերջադաս - ենթակա + ստորոգյալ՝ դ/դ:

Օրինակներ

1. Նախադաս

օր.՝ Երկար նիզակները ճոճելով՝ պահապանները անցուդարձ էին անում բերդի շուրջբոլորը:

2.Միջադաս

ա) Պահապանները, երկար նիզակները ճոճելով, անցուդարձ էին անում բերդի շուրջբոլորը:

բ) Դոյակի դիմաց, երկար նիզակները ճոճելով, պահապանները անցուդարձ էին անում բերդի շուրջբոլորը:

գ) Առավոտյան, երկար նիզակները ճոճելով, պահապանները անցուդարձ էին անում բերդի շուրջբոլորը:

3. Վերջադաս

Պահապանները անցուդարձ էին անում բերդի շուրջբոլորը՝ երկար նիզակները ճոճելով:

Բացառություններ

1.Եթե նախադասությունն ունի երկու ստորոգյալ, այսինքն՝ բարդ է, այս դեպքում կետադրությունը որոշվում է նրանով, թե դերբայական դարձվածը որ ստորոգյալի լրացումն է:

օր.՝ ա) Տղան ներս մտավ և, վերցնելով պայուսակը, շտապ դուրս եկավ:

Կամ՝

բ) Տղան ներս մտավ և վերցնելով պայուսակը՝ շտապ դուրս եկավ:

ա) Աղջիկը ներս մտավ՝ վերցնելու պայուսակը, բայց այն չկար:

2. Երբեմն դերբայական դարձվածի կազմում դերբայի լրացումը կարող է արտահայտվել ստորադաս նախադասությամբ:

Օր.՝ 1) Նախադաս

Մտածելով, որ դիմացը անդունդ է՝ նա առաջ չէր գնում:

Կամ

Մտածելով, որ դիմացը անդունդ է, նա առաջ չէր գնում:

2) Միջադաս

Նա, մտածելով, որ դիմացը անդունդ է, առաջ չէր գնում:

3) Վերջադաս

Նա առաջ չէր գնում՝ մտածելով, որ դիմացը անդունդ է:

3. Երբ երկրորդական նախադասությունը սկսվում է «որ»-ով, որին հաջորդում է դերբայական դարձվածը, պետք է ուշադիր լինել՝ արդյոք շաղկապ, թե հարաբերական դերանուն է այն:

Եթե շաղկապ է, կհաջորդի բուրը, իսկ եթե հարաբերական դերանուն է, պիտի ուշադիր լինել, թե ինչ անդամի դեր ունի այն: Եթե ենթակա է, ապա դերբայական դարձվածը միջադաս դիրք կունենա և երկու կողմից կնշանակվեն ստորակետեր:

օր.՝ ա) Նա վերցրեց սրբիչը, որ արագ չորացնելով սպասքը՝ տեղավորի պահարանում:

բ) Նա վերցրեց այն սրբիչը, որ(ը), շատ լավ մաքրելով պնակները, որևէ հետք չէր թողնում:

4. Կա ևս մեկ դեպք, եթե նախադասության ենթական զեղչված է, ապա միջադաս դերբայական դարձված չենք կարող ունենալ: Այս դեպքում կունենանք կա՛մ նախադաս, կ՛ամ վերջադաս դերբայական դարձված:

օր.՝ Ծաղիկն ամրացնելով կրծքին՝ դուրս եկավ սենյակից: (նախադաս)

Դուրս եկավ սենյակից՝ ծաղիկն ամրացնելով կրծքին: (վերջադաս)

5. Պատահում է, որ դերբայական դարձվածը բազմակի է լինում. այս դեպքում նրանք իրարից բաժանվում են ստորակետով:

օր.՝ Մի քանի տարի աշխատելով, գումար կուտակելով՝ ամուսինը կարողացավ մի փոքրիկ տուն ձեռք բերել:

6. Եթե նախադաս և միջադաս դ/դ-ին հաջորդում է օժ. բայ, ապա այս դեպքում դ/դ-ը չի կետադրվում:

օր.՝ 1) Զինվորներից մեկը բարձր երգելով էր քայլում:

2) Բարձր երգելով էր քայլում զինվորներից մեկը:

Հանդիպում են նաև դերբայական դարձվածներ՝ զեղչված դերբայով:

օր.՝ ա) Նստած էր Դիլան դային՝ աչքը հեռու սարերին (հառած):

բ) Մի կտոր հաց ձեռքի մեջ՝ (պահած) ներս մտավ փոքրիկ տղան:

Երբեմն դ/դ-ը շփոթվում է հարադրական բառերի կամ բարդությունների հետ.

օր.՝ Շունչը կտրած ծառս եղավ նժույգը:

Այստեղ «շունչը կտրած» արտահայտությունը բուն հարադրություն է, որը չի կարելի դիտել դ/դ և կետադրել:

1.6 Պարագաներ՝ արտահայտված դերբայական դարձվածով, որոնք տրոհվում են

1. Ժամանակի պարագա դ/դ

օր.՝ Լիովին սթափվեց՝ տեսնելով Միքայելին:

2. Նպատակի պարագա դ/դ

օր.՝Մի առավոտ Անդրանիկը Երվանդին ուղարկեց կայազորի պետի մոտ՝ իրենց ձիերը տեսնելու:

3. Ձևի պարագա դ/դ

օր.՝ Կոստանդի ձին, առջևի ոտքերը խաղացնելով, թռչում էր քարերի վրայով:

4. Պատճառի պարագա դ/դ

օր.՝ Սոնան հապշտապ սուրաց դեպի հնձանը՝ ճգնելով թաքցնել հոգեցունց հուզմունքը:

5. Ձիջման պարագա դ/դ

օր.՝ Դեռևս շատ երիտասարդ լինելով՝ կարողացել էր իր տեղը գտնել կյանքում:

6. Պայմանի պարագա դ/դ

օր.՝ Սրան – նրան անվերջ բողոքելով՝ գործերդ առաջ չես տանի:

7. Հիմունքի պարագա դ/դ

օր.՝ Հիմք ընդունելով ուսուցչի խորհուրդները՝ տղան սկսեց լուրջ պարապել:

1.7 Կապով արտահայտված դ/դ – ներ

Կապով արտահայտված դ/դ – ները, եթե դրանք նախադաս կամ միջադաս են, հիմնականում չեն կետադրվում, սակայն վերջադաս դ/դ – ները հիմնականում կետադրվում են:

ա) Ժամանակի պարագա դ/դ – ները՝ կապով արտահայտված, չեն կետադրվում:
օր.՝ Մարդիկ հեռացան խանութի մոտից նախքան մութն ընկնելը:

բ) Համար, պատճառով, նպատակով, չափ կապերով արտահայտված դ/դ – ները վերջադաս դիրքում կարող են և՛ կետադրվել, և՛ ոչ:
օր.՝ ա) Պառավը շփոթվեց (՝) իր տանը այդքան շատ հյուրեր տեսնելու պատճառով:
բ) Ես անմիջապես շտապեցի գյուղամեջ (՝) հավաքվածներին լուրը հաղորդելու հաւմար (նպատակով) :
գ) Չափի պարագա դ/դ
օր.՝ Երկվորյակները նման էին (՝) միմյանցից բոլորովին չզանազանվելու չափ:
Միայն վերջադաս դիրքում են կետադրվում՝
ա) պայմանի պարագա դ/դ – ը
օր.՝ Եվ նա կանի ամեն բան՝ քո չկանխելու դեպքում:

դ) Կան դ/դ – ներ, որոնք որոշ կապերով արտահայտված լինելու դեպքում կետադրվում են բոլոր դիրքերում: Դրանք են ՝ հակառակ, առանց, ի, առ, ըստ, համաձայն, չնայած, նաև «բացի» կապը, որը կարելի է կետադրել բութով կամ ստորակետով և կամ չկետադրել:

ա) օր.՝ Հակառակ հարևանի պատմածի՝ ծնողները նրան գտան դպրոցի բակում:

Ծնողները, հակառակ հարևանի պատմածի, նրան գտան դպրոցի բակում:

Ծնողները նրան գտան դպրոցի բակում՝ հակառակ հարևանի պատմածի:

բ) Չնայած իր հսկա մարմնին՝ Վահանը ուտում ու խմում էր չափավոր:

Վահանը, չնայած իր հսկա մարմնին, ուտում ու խմում էր չափավոր:

Վահանը ուտում ու խմում էր չափավոր՝ չնայած իր հսկա մարմնին:

գ) Առանց որևէ խոսք ասելու՝ նա դուրս եկավ տանից:

Նա, առանց որևէ խոսք ասելու, դուրս եկավ տանից:

Նա դուրս եկավ տանից՝ առանց որևէ խոսք ասելու:

դ) Բացի լավ սովորելուց (՝ ,) տղան զբաղվում էր նաև հողագործությամբ:

Տղան(,) բացի լավ սովորելուց (,) զբաղվում էր նաև հողագործությամբ:

Տղան զբաղվում էր նաև հողագործությամբ (,) բացի լավ սովորելուց:

ե) Ըստ հորս պատմածի՝ պապս եղել է Նժդեհի զինվորներից:

Պապս, ըստ հորս պատմածի, եղել է Նժդեհի զինվորներից:

Պապս եղել է Նժդեհի զինվորներից՝ ըստ հորս պատմածի:

Կողմնակի անդամներ

Նախադասությունների վերլուծության ժամանակ, երբ որոշվում է դերբայական դարձվածի սահմանը, գտնում ենք նաև գերադաս դերբայի լրացումը կամ լրացումները, որոնք համարվում են կողմնակի անդամներ:

Իսկ ենթակա դերբայական դարձվածի մեջ գերադաս դեբայի լրացումը չպետք է շփոթել հատկացուցչի հետ. այն համարվում է կողմնակի ենթակա:

օր.՝ Կռունկների վերադառնալը ինձ մեծ բերկրանք պատճառեց («կռունկների» բառը համարվում է կողմնակի ենթակա):

Եզրակացություն

Ինձ թվում է այս աշխատանքով կարողացել եմ ընդհանրացնել և ամբողջացնել այն գիտելիքները ու փորձը, որով ավելի հեշտ ու կիրառելի կարելի է դարձնել «Դերբայական դարձված» թեմայի ուսուցումը, նպաստել, որ աշակերտը ավելի դյուրին ու կանոնակարգված յուրացնի այն, կարողանա ճանաչել դերբայական դարձվածի սահմանը, կարողանա հասկանալ, թե այն նախադասության ինչ անդամ է, և ճիշտ կետադրել:

Հայերենում դերբայական դարձվածների գործածությունը շատ է և, բնականաբար, այն ավելի ճոխացնում է ասելիքը, լեզուն ավելի ճկուն է դարձնում:

Գրականության ցանկ

1. Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան - «Շարահյուսություն» 2004թ.
2. Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան - «Կետադրություն» 2009թ.
3. Հայոց լեզվի հարցաշարերի շտեմարան – 2005 – 2006թթ.
4. Լ. Եզեկյան – Հայոց լեզու – 2007թ.